19.03.25 - 19.03.25
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ պատմության թանգարան (ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ)

Ս.թ. մարտի 19-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ պատմության թանգարանում (ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ) «Ի՞նչ ենք հասկանում՝ «արգելված գրականություն» ասելով» խորագրով բանախոսությամբ հանդես կգան գրականագետներ Հայկ Համբարձումյանը և Արքմենիկ Նիկողոսյանը։

Արգելված գրականություն եզրույթը վերաբերում է այն գրքերին, հոդվածներին, ստեղծագործություններին կամ գրական այլ նյութերի, որոնց շրջանառությունը որոշակի պատճառներով արգելվում և սահմանափակվում է հանրության համար: Արգելման պատճառներ կարող են լինել քաղաքական, կրոնական, սոցիալական կամ մշակութային իրողությունները:

Գրականության պատմության մեջ մի շարք հայտնի գործեր արգելվել են այն պատճառով, որ քննադատել են իշխանություններին, խախտել են հասարակական նորմերը կամ շոշափել են զգայուն թեմաներ, ինչպես, օրինակ, ռասիզմ, անհանդուրժողականություն և այլն:

Տարբեր ժամանակահատվածներում արգելվել են Չարլզ Դիքենսի, Ջեկ Լոնդոնի, Էռնեստ Հեմինգուեյի, Ալեքսանդր Սոլժինիցինի, Բորիս Պաստեռնակի, Ջորջ Օրուելի, Եղիշե Չարենցի, Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի և այլոց երկերը, աշխատությունները։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am